# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 14

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի ավագանու թիվ 4 նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ .

*1.Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը բյուջեի 2016թ-ի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:*

*2. Աջակցություն հարկերի հավաքագրման աշխատանքների կազմակերպմանը:*

*3. Աղբահանության աշխատանքների կազմակերպմանն աջակցության մասին:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 15

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2016թ-ի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին գնահատել դրական և ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ /կողմ/
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ /կողմ/
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ /կողմ/
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ /կողմ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2016թ-ի հուլիսի 28-ի թիվ 15 որոշման

# ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

2016 թ-ի հուլիսի 8-ն Բերդիկ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում,որը նախագահում էր համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյանը , քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Զ. Ղազարյանը :Մասնակցում էին ավագանու անդամները , համայնքի ղեկավարի աշխատակազմը , բուժամբուլատորիայի աշխատողները , դպրոցի տնօրենն ու մանկավարժները , համայնքի բնակիչները :

ԼՍԵՑԻՆ՝ Արարատի մարզի Բերդիկ համայնքի ղեկավար Ա.Բաղդասարյանի հաշվետվությունը՝ 2016 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց,որ
2016թ. երկրորդ եռամսյակի ընթացքում Բերդիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 105 դիմում , ինչպես նաև բանավոր հարցումներ , որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:
- Համայնքապետարանը բնակիչներին տվել է 62 տեղեկանք, ստացել է 89 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից , որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:
- 2016 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում կազմակերպվել են համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ , որոնք կրել են պարբերական բնույթ ՝ մաքրվել են ոռոգման առուները , փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման , սահմանների ճշգրտման , հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ: 2016թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝
  *ա) հողի հարկ -360,0 հազար դրամ ,*
  *բ) գույքահարկ – 255,6 հազար դրամ ,*
  *գ) տեղական տուրք – 30,0 հազար դրամ ,*
  *դ) ոչ հարկային եկամուտ - 120,0 հազար դրամ ,*
- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

ա / համայնքում նշվել են մարտի 8-ը՝ կանանց միջազգային օրը, մայիսի 9-ը՝ Հայրենական Մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման օրը:
բ/ Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին – հուղարկավորությունների համար տրվել է ՝ 140,0 հազար դրամ , սոցիալական կարիքների համար 300,0 հազար դրամ ֆինանսական աջակցություն :

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության  Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 16

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասի   պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Առաջարկել համայնքի ղեկավարին կազմակերպելու և պատշաճ մակարդակով անց կացնելու գույքահարկի ու հողի հարկի հավաքագրումը , համայնքի սահմաններում գտնվող համայնքային ենթականություն համարվող հողերի վարձավճարների գանձումն ու վերահսկումը :

Կողմ -5    Դեմ -0    Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝    ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 17

### ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19.1-րդ կետի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Առաջարկել համայնքի ղեկավարին կազմակերպելու և պատշաճ մակարդակով անց կացնելու համայնքում աղբահանության աշխատանքները՝ համաձայն համայնքի սանիտարական մաքրման սխեմայի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**